



Սույն գիրքը թվայնացվել է Գրքասեր ՀԿ-ում՝ հայերենով գրականության պահպանման, հանրայնացման և ժամանակակից թվային միջավայրում հասանելի դարձնելու նպատակով:

Կազմակերպության նախաձեռնությունը միտված է հայերեն գրքերի և տեքստերի տարածմանը, ընթերցանության խթանմանը և մշակութային ոչ նյութական ժառանգության պահպանությանը՝ ապահովելով դրանց հասանելիությունը հնարավորինս լայն շրջանակների համար:

Մենք հավատում ենք, որ թվայնացումը ոչ միայն պահպանման միջոց է, այլև գիտելիքի, գրականության և մշակույթի շարունակական փոխանցման կարևոր ուղի:

Գրքասեր ՀԿ-ն գրքերը ձայնագրում և թվայնացնում է բացառապես Ձեր նվիրատվությունների շնորհիվ: Կազմակերպությանը կարող եք օժանդակել հետևյալ հղումով՝

<https://grqaser.org/hy/donate>

Ստուգված

Հրապարակախոսություն

13+

Վարդգես Պետրոսյան

«Համլե՛տ: Գուլցե և Համլետ, բայց...»

(դիալոգ՝ անգլիական վիպասան Ջեյմս Օլդրիջի հետ— փակագծերով և շեղումներով)

Չգիտեմ ինչու, երբ նստեցի գրասեղանի առաջ և ձեռքս առա Ջեյմս Օլդրիջի հետ ունեցած զրույցիս գրառումները, ուրիշ բան հիշեցի ... Կանաչ դաշտ: Մի խումբ դիմակավոր երիտասարդներ թենիս են խաղում: Լուսանկարիչը, որ տառապալից գիշեր է ապրել, հեռվից ապշած նայում է նրանց: Ոչ թենիսի ցանց կա, ոչ գնդակ, ոչ ռակետ: Բայց խաղում են, խաղում են անձայն և ոգևորված, երևակայական ռակետով հարվածում են երևակայական գնդակին, որ թռչում է երևակայական ցանցի վրայով: Երբեմն գնդակն «ընկնում է» կանաչին, այդ դեպքում խաղացողներից մեկն ու մեկը «վերցնում է» ձեռքով, օդ նետում: Հանկարծ գնդակը «թռչում է» դեպի լուսանկարիչը: Խաղացողները շարժումներով հասկացնում, ինչպես են «վերցնել» գնդակը, իրենց նետել: Լուսանկարիչը, ի վերջո, «վերցնում է» գետնից գնդակը, նետում: Խաղը շարունակվում է, կինոնկարը վերջանում: Անտոնիոնիի «Բլուու-ափ» կինոնկարը: Ես այն դիտեցի այս տարվա ապրիլին, կանադական Մոնրեալ քաղաքում:

Եթե կոպիտ ձևով թարգմանենք կինոնկարի իմաստը, այս է. «Աշխարհում ոչինչ չկա իրական. ոչ սեր, ոչ հանցանք, ոչ հավատարմություն, ոչ ողբերգություն, ամեն բան պատրանք է, մեր երևակայության ծնունդը, ամեն բան՝ և՛ եղել է, և՛ չի եղել ու դժվար է ասել որն է ավելի իրական եղա՞ծը, թե՞ չեղածը»:

Ինչո՞ւ դա հիշեցի:

Օլդրիջն ասաց. «Ես շատ եմ սիրում մեր բիթների երգերը: Հատկապես մեկը՝ «Ելակի դաշտը»: Երգը հոգեբուժարանի մասին է, երգը պատասխան է որոնում հետևյալ հարցին. «ո՞ր աշխարհն է իրական— այն, որ քո շուրջն է, թե՛ այն, որ ունես ներսումդ, քո երևակայության և տառապանքի մեջ...»:

«Բայց մի՞թե դա լավ է, մի՞թե դա ելք է»:

«Դա բողոք է այն աշխարհի նկատմամբ, որ կա: Այսօրվա սերունդը հասկանում է, որ ինչ-որ բան իր տեղում չէ: Բայց ի՞նչ: Նա այդ ուզում է ինքն իմանալ, իր փորձով, իր տառապանքով: Նա չի հավատում ոչնչի և ոչ ոքի: «Աշխարհում ոչինչ չկա իրական»,— երգում են բիթլերը: Նրանց հեշտ է խաբել, բայց ոչ երկար ժամանակով, նրանք իրենց մտքերն ունեն, աշխարհին նայելու տեսանկյունը: Ոչինչ սրբազան չկա նրանց համար՝ ոչ հին օրենքները, ոչ հենց իրենք...:

«Մի քիչ չափազանց չէ՞»:

«Ոչ, որովհետև նրանց խաբել են: Թեկուզ նրանց նախորդ սերունդի մարդիկ, որ հայտնի էին **զայրացած երիտասարդ մարդիկ** անունով, որոնք պատերազմի ժամանակ 13-15 տարեկան էին, իսկ հիմա՝ 40-45: Պատերազմից հետո նրանք հարձակվեցին անգլիական հասարակության վրա՝ մոլեգին քննադատությամբ: Հիշո՞ւմ եք Ջոն Օսբորնի պիեսը՝ «Չայրոյթով ետ նայիր»: Ի՞նչ են անում հիմա նրանք՝ այդ **զայրացած մարդիկ**: Ապրում են հանգիստ, կապիտալիզմը նրանց «կաշառեց» նյութական և որոշ չափով էլ ինտելեկտուալ արժեքներով (նրանց թույլ տվեցին քննադատել հին սերնդին, հին բարքերը) և հիմա նրանք գտնում են, որ կապիտալիզմը լավ է: Ջոն Բրեյնը նույնիսկ հողված գրեց. «Ինչո՞ւ եմ ես ռեակցիոներ»: Ուրեմն, **զայրացած երիտասարդ մարդիկ** ոչ թե հասարակական անարդարությունների վրա էին զայրացած, այլ բաժին էին ուզում: Ստացան այդ բաժինը և լռեցին...: Երևի բացառություն է միայն Օսբորնը, որը շարունակում է նախկին կրքով:

(Օլդրիջի խոսքերն ինձ հիշեցնում են նման մի դեպք: Երկու թե երեք տարի առաջ, Փարիզի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետ ընդունվել ցանկացողներին հանձնարարվեց աշխատանք գրել հետևյալ թեմայով. «Ավելի լավ չէ՞ փոխել մեր երազանքները, քան մտածել աշխարհի կարգը փոխելու մասին»: Ուսանողների աշխատանքների մասին «Ֆիզարո լիտերեր» շաբաթաթերթում հանդես եկավ նշանավոր հրապարակախոս Ֆրանսուա Նուրիայեն և բացեց փակագծերը: «Աշխարհի վերափոխումը,— գրեց նա,— սոսկ երազանք է, որից՝ մենք պիտի ետ վարժվենք, պիտի կերակվենք համեստ, աննշան ցանկություններով»: Նուրիայեն «անօգուտ ճակատամարտեր» է համարում մարդկության հազարամյակների պայքարը հանուն արդարության, լավ կյանքի և սոցիալական առաջադիմության և եզրակացնում է. «Անօգուտ ճակատամարտերից, կեղծ լոզունգներից հրաժարվելը կապված է կոմֆորտի, այսինքն, մարդու համար ամենակարևորի հաղթանակի հետ»: Այսինքն, զուր է պայքարել հանուն արդարության, կեցցեն կոմֆորտը, վայելքները, սեփական բարեկեցությունը):

«Չայրացած երիտասարդ մարդիկ խաբեցին նոր սերնդին,— ասում է Օլդրիջը,— սերունդ, որը պատերազմից ոչինչ չի հիշում, որը նոր-նոր դառնում է 20-25 տարեկան: Եվ դրա համար՝ սերունդը որոշեց ճշմարտությանը հասնել սեփական ուժերով: Այստեղից՝ մտքի անարխիա, հավատի փլուզում: Այդ ժամանակ էր, որ ծնվեցին բիթլերը, որոնց ես համարում եմ մեր, հասարակական կյանքի վերջին 30-40 տարվա ամենանշանակալից երևույթը: Նրանք կարողացան հասկանալ իրենց սերնդի հոգեկան կառուցվածքը, նրա հույսերը, տառապանքը: Ճիշտ է, կյանքը քննելու համար հաճախ նրանց պակասում է մտքերի և կենսափորձի պաշարը, բայց նրանք որոնում են, ուզում են հայտնագործել կյանքի իրենց չափանիշները: Նրանք արհամարհում են փողը («ես ուզում եմ հարուստ լինել, իրեր բայց չեմ պատրաստվում փողը դարսել իրար վրա, ծախսում եմ ինչպես ուզում եմ»): Եթե տարեց անգլիացին վրա ավտոմեքենա է առնում, նա խնամում, փայփայում է մեքենան, երիտասարդը պարզապես օգտվում է նրանից, իմանալով, որ դա ժամանակավոր բան է՝ ինչպես ամեն ինչ այս անհասկանալի աշխարհում»:

«Բայց դա շատ հեռուն չի՞ տանի, ամեն ինչի ժխտումը չի՞ զրկի կյանքը նպատակից առհասարակ»:

«Նրանք լավ տղաներ ու աղջիկներ են, ի տարբերություն բիտնիկների՝ ավելի ակտիվ են, ամենքն էլ դեմ են վիետնամական պատերազմին, բողոքում են ամերիկյան քաղաքականության դեմ, ցույցեր են անում»:

«Իսկ ունե՞ն նրանք ազգային հոգսեր»:

«Ոչ, նրանք ամենքն էլ գիտեն, որ Անգլիան վաղուց արդեն Մեծ Բրիտանիա չէ, բայց նրանց քիչ է հուզում այդ վեհության կորուստը: Նրանք նման են այն սևանկացած ազնվականին, որ փողոց է դուրս գալիս հնամաշ շորերով, չմտահոգվելով, թե ինչ կմտածեն դրսում: Եվ հետո, մի մոռացե՞ք, որ Անգլիան իր տեսակի մեջ հազվագյուտ երկիր է. մեզ մոտ արդեն 300 տարի է, ինչ վերացել է գյուղ և գյուղացի հասկացողությունը: Սա չի կարող իր նշանակությունը չունենալ»:

«Ես նախանձով եմ նայում այս սերնդին, — շարունակում է Օլդրիջը, — նա հաճախ անում է այն, ինչ մեր սերունդը կուզենար անել, գտնում է այն, ինչ մենք նույնիսկ չէինք որոնում: Մեր սերունդն էլ (ես պատերազմի ժամանակ 22-23 տարեկան էի) ունեցավ իր հիասթափությունները, իր հոգեկան ցնցումները: Բայց ես չեմ ցավում, որ մենք այն ժամանակ հավատում էինք շատ բաների, որ հետո քննություն չբռնեցին: Ամեն սերունդ իր ողբերգությունն ունի և իր ուրախությունը»:

«Իսկ ո՞ր կարող է հասցնել նոր սերնդի ժխտման փիլիսոփայությունը, այդ համատարած կասկածանքը: Երևի ինչ-որ համլետյան բան կա այդ ամենի մեջ, բայց՝ այսքա՞ն միլիոն Չամլետ...»

«Չամլե՞տ: Գուցե և Չամլետ, բայց...»:

Ես Օլդրիջին հիշեցնում եմ Ջ. Ուոլլիսի վեպ-ուստոյան (1964 թ.) «Միայն սիրահարվածներն են կենդանի մնում»: Վեպում բոլոր մեծահասակները ինքնասպան են լինում, մնում են միայն թինեյջերները (13-19 տարեկաններ): Եվ ահա, երբ կործանումի կիրքը այլևս չի զսպվում ավազների օրենքներով, տրադիցիաներով, պատանիներն ուշքի են գալիս քաղաքակրթության ավերակների վրա: Ես հարցնում եմ, թե ինչպե՞ս ընդունեց Անգլիայի նոր սերունդը այդ գրքի գաղափարները:

«Ոչ ավելի լուրջ, քան ինքը՝ հեղինակը, — ասում է Օլդրիջը, — դա տուրք էր ժամանակին, շատ լավ արված կատակ: Ես վերջերս Լոնդոնում տեսա Ուոլլիսին. նա առաջ մոտոցիկլետով էր ման գալիս, հիմա մեքենա էր գնել: «Ուստոյայի փողով է», — ասաց նա ինձ:

«Մեզ մոտ ավելի լուրջ բաներ կան: Խոսքս նարկոմանիայի մասին է, որ տարածվում է վարակի պես: Դուք պատկերացնո՞ւմ եք, Լոնդոնի ազգային պատկերասրահը դարձել է նարկոմանների շտաբը, հանդիպման, գործարքներ կնքելու վայրը: Վերջերս պատկերասրահի ղեկավարությունը հանդես եկավ տազնապալից հայտարարությամբ: Բայց նույն օրերին «Թայմսը» առաջարկեց լեզալացնել, օրինականացնել նարկոտիկների վաճառքը»:

«Ինչո՞ւ»:

«Կա քաղաքական, սոցիալական բացատրություն: Նարկոտիկներն ավելի անվտանգ են, քան ալկոհոլը: Վիսկին, գինին մարդիկ խմում են խմբով, ուրեմն, խոսում են ինչ-ինչ հարցերի մասին, վիճում են, քննարկում, երբեմն համաձայնության գալիս: Դա վտանգավոր է, նույնիսկ երբ երկուսով են նստում սեղանի շուրջ, վտանգավոր է տիրող կարգի համար: Նարկոտիկ (թմրադեղ) մարդ ընդունում է մենակ, առանձնության մեջ: Նարկոտիկը իրարից բաժանում է մարդկանց, ալկոհոլը՝ միացնում»:

«Դա ալկոհոլի լավ ռեկլամ է», — ծիծաղում եմ ես:

«Ես պարզապես համեմատում եմ: Երկրորդ՝ կա առողջապահական բացատրություն: Նարկոտիկների որոշ թույլ տեսակներ չեն ազդում մարդու ֆիզիկականի վրա»:

«Բայց մտավոր հատկությունների վրա...»:

«Ես հենց ուզում էի դրա մասին խոսել: Անպայման ազդում են, բթացնում: Բայց դա հենց այն է, ինչ պետք է կառավարությանը:

Կա նաև ինտելեկտուալ բացատրություն: Գրականությունը, արվեստը՝ հավանորեն արդեն սպառել են մարդու ներքնաշխարհի վրա ազդելու բոլոր եղանակները, հարկավոր է նոր բան գտնել, ազդեցության նոր միջոց»:

(Ես հիշում եմ հենց իր՝ Օլորիջի հոդվածը, որ կոչվում էր «Ինտելեկտուալ ինքնասպանություն»): Այստեղ խոսվում է մասնավորապես նոր թմրադեղի՝ ԼՄԴ-ի գործած ավերմունքների մասին: Այդ թմրադեղով հրապուրվում են և՛ հասուն մարդիկ, մասնավորապես արվեստագետները և՛, ավելի շատ, ուսանողները, նրանց մոտ պայմաններն ավելի «բարենպաստ» են՝ ի դեմս թերի զարգացած ուղեղի և երիտասարդ մարմնի, որ փորձությունների է ձգտում: Ես ուզում եմ պարզապես մեջբերել մի քանի տող Օլորիջի հոդվածից.

«ԱՄՆ-ում դուք ազատ կերպով կարող եք թմրադեղ գնել՝ դրանք վաճառվում են ամենատարբեր ձևերով: Ուսանողների մեջ, ինչպես հաղորդում են, նույնիսկ հատուկ ժարգոն է առաջացել և այժմ ասում են. «Գնանք ԼՄԴ-ի մեջ սուզվենք»): Իրենք իրենց անվանում են «թթվազլուխներ», որը հիշեցնում է կոմիքսային գրականության հրեշներին: Բայց ԱՄՆ-ում թմրադեղերի տարածման մեջ ամենավտանգավորն այն է, որ մի թմրադեղ ընդունողը աշխատում է դրա օգտակարությունը համոզել մյուսին, դրանով կարծես քողարկելով սեփական անկումը: «Անվնաս է,— ասում են թմրադեղ ընդունողները,— և նույնիսկ ոգեշնչող»: Նորմալ երիտասարդի վրա ԼՄԴ-ի իրական ազդեցությունը վերջերս Լոնդոնում իր կատարած փորձերով ապացուցեց դոկտոր Կրիստին Պիկկարդը: Պիկկարդը երիտասարդ լրագրող-բժիշկ է և չնայած նրա զեկուցման մեջ, որը տպագրվել է «Իվինգ Ստանդարտում», թերթային սենսացիայի մասնիկ կա, այնուամենայնիվ, հեղինակը կարողացել բացահայտել թմրադեղի սպանիչ հետևանքները այն նորմալ երիտասարդների վրա, ովքեր համաձայնվել են քննության ենթարկվել:

Դոկտոր Պիկկարդը իր զեկուցման մեջ հետևողականորեն, քայլ առ քայլ նկարագրում է այն ամենը, ինչ տեղի էր ունենում այդ երիտասարդներից մեկի՝ Ջոնաթան Այտկենի հետ: Ընդունելով թմրադեղը Այտկենին տեսել է գեղեցիկ և անիրական գույներ, իսկ հետո թմրադեղի ազդեցության հետ, զգայախաբուրությունը ընդունել է ավելի ծանր բնույթ և նա պարբերաբար ասել է դոկտոր Պիկկարդին.

— Ինձ թվում է, որ մես խելագարվում եմ... Ինձ մենակ մի թողեք... Այդ թմրադեղի մեջ ոչ մի լավ բան չկա... Այն հաճելի կարող է լինել միայն հոգեկան հիվանդների համար:

Մի քանի ժամ անց նա հարբածի պես էր, բայց աշխատում էր տիրապետել իրեն ու ինչ-որ բան ասել: «Քանի դեռ չեմ կորցրել գիտակցությունս,— շշնջում էր նա,— ուզում եմ, մի կարևոր բան հայտնել: Թող այլևս ոչ ոք երբեք չզբաղվի այս թմրադեղով»:

Ես հիշում եմ այս հոդվածը, Օլորիջի բերած ահավոր օրինակները, որ, իսկապես, կարելի է բնորոշել իբրև ինտելեկտուալ ինքնասպանություն: (Ահա նաև մի լուսանկար, որ պատկերում է թմրադեղ ընդունած երիտասարդ աղջկան):

«Մի քանի ամիս առաջ էր,— շարունակում է Օլորիջը,— ես գնում էի Լոնդոնի մետրոյով: Իմ կողքին նստած էր աֆրիկացի մի ուսանող: Երկուսս էլ իջանք Փիկատիլլե կայարանում: Դա

Լոնդոնի կենտրոնն է: Աֆրիկացի ուսանողը շտապում էր, դա զարմանալի էր ինձ համար, որովհետև բիտնիկները սովորաբար քայլում են ալարկոտ, չեն շտապում: Ես հետևեցի աֆրիկացուն: Հասանք մի խաչմերուկ: Այնտեղ աֆրիկացուն սպասում էին մի անզվիացի տղա և արջիկ, 15-16 տարեկան: Աֆրիկացին նրանց ինչ-որ բան տվեց, վերցնելով թղթադրամը: Հասկանալի է, թմրադեղ էր: Եվ սա կատարվում է Լոնդոնի սրտում, օրը ցերեկով: Ես գիտեմ, որ կառավարությունը պաշտպանում է «Թայմսի» առաջարկը թմրադեղի վաճառքը օրինականացնելու մասին: Սարսափելի է, ուղղակի համազգային աղետ: Ի դեպ, թմրադեղ ընդունողներից շատ-շատերը հրաշալի տղաներ ու արջիկներ են, նույնպես դեմ են արտահայտվում վիետնամական պատերազմին, ցույցեր են անում»:

(Իսկ ես հիշում եմ Կանադա, Տորոնտո, Երկվիլ փողոցը երեկոյան: Փողոցը լցված էր 18-20 տարեկաններով՝ տղաներ հիշեցնող արջիկներով, արջիկներ հիշեցնող տղաներով: Հոգնած դեմքեր, մարմիններ, որ կարծես թե ուր որ է կփշրվեն, անտարբեր, մշուշոտ աչքեր: Նրանք նստած, շատ-շատերը պարզապես պառկած էին մայթերին, փողոցում: Համբուրվում էին, գոռում ինչ-որ անհասկանալի ձայներով: Այն ժամանակ ես մտածում էի, որ հարբած են, հավանորեն նրանցից շատ-շատերը նաև թմրադեղ էին ընդունել: Ո՛ր կտանի այս ամենը: Երևի նրանք էլ վատ վատ տղաներ ու արջիկներ չէին, նույնպես ցույցեր են անում, բողբոջում պատերազմի դեմ, բայց ո՛ր կտանի այս հոգեկան ամայությունը, մինչև ո՛ր...):

«Ժամանակակից սերունդը շատ հպարտ է,— Ե Օլդրիջը,— հիշում եմ, 1930 թվականին մենք գործադուլ էինք անում, բայց երբ երևաց մեր բոսը, գլխարկներս հանեցինք: Ճորտական բնագործ շատ էր ամուր մեր մեջ: Հիմա նրանք սեփական արժանապատվության բարձր զգացում ունեն: Բիթները արթնացնում են նրանց մեջ հենց այդ զգացումները, ճանապարհներ գտնում դեպի իրենց հասակակիցների սրտերը»:

«Իսկ բացի բիթների՞ց...»

«Մեր ամբողջ արվեստը փորձում է արտահայտել այդ պրոցեսը, որի մասին խոսում էի: Հաջողված գործեր կան, բայց բիթները լավագույններն են: Նրանք հիմա ահռելիորեն հարուստ են, բայց շարունակում են ապրել իրենց սերնդակիցների նման, ծախսում են շռայլորեն, այնպես անտարբեր, որ հաճախ մոռանում են, թե ինչպես են ստեղծվում մարդկային բարիքները: Երբ նրանք ձեռք բերեն մեր փորձը, կարծում եմ, որ կլինեն հրաշալի սերունդ... »:

«Իսկ կարո՞ղ է պատահել, որ այս սերունդն էլ գնա զայրացած երիտասարդ մարդկանց հետքով, չէ՞ որ նրանց սկիզբը բավական նման է... »:

«.»:

(Ես նորից եմ հիշում Անտոնիոնիի ցնցող կինոնկարը: Գուցե հարկ կա մի քանի բառով վերապատմել: Երիտասարդ լուսանկարիչը, որ գեղեցիկ արջիկներ է լուսանկարում, հոգնած քաղաքից, աղմուկից, կիսամերկ արջիկներից՝ գնում է մերձքաղաքյա անտառ: Բնություն: Հեռվից նկատում է տարեց մի տղամարդու և երեսունն անց երիտասարդ մի կնոջ: Կինը տղամարդու ձեռքերից բռնած ծիծաղելով նրան ձգում է դեպի անտառի խորքը: Լուսանկարիչը գործի է դնում իր ապարատը: Կինը նկատում է: Նա զայրացած մոտենում է, պահանջում հանել-ոչնչացնել ժապավենը: Տղան ծիծաղում է, բայց տալիս է հասցեն: Կինը հեռանում է, տղան շարունակում է լուսանկարել: Երեկոյան կինը գալիս է լուսանկարչատուն. առաջարկում իր մարմինը՝ միայն թե... Տղան տալիս է, բայց ուրիշ ժապավեն, կինը գնում է: Նա սկսում է տպել նկարները և հանկարծ՝ մի քանի կադրերում, ծառերի տակ ինչ-որ կասկածելի բան է նշմարում: Սկսում է խոշորացնել այդ հատվածը («Բլոու-ափ»—խոշոր պլանով): Կասկածները ուժեղանում են: Տղան խելակորույս վազում է անտառ, ծառերի տակ տարեց տղամարդու դիակն է:

Ետ է գալիս լուսանկարչատուն, այստեղ ամեն ինչ տակնուվրա է արված, բոլոր լուսանկարները, ժապավենները չքացել են: Մի՞թե կինն է վերադարձել: Պահարանի տակ պատահաբար մնացել է մի լուսանկար. վերցնում է լուսանկարը, վազում շեֆի մոտ, ընկերների: Նրանց գտնում է Էքստազի մեջ, ամենքը հարբած են, խելակորույս, ոչ ոք չի լսում, նրան աղջիկ են առաջարկում, գինի: Տղան դուրս է թռչում: «Մարդ են սպանել»: Բայց որոշում է նորից ստուգել: Ծառերի տակ ոչինչ չկա, անգամ խոտը տրորված չէ: Սա ի՞նչ է, ցնո՞րք, գառանցամը...»

Բացվում է առավոտը, գալիս են դիմակավոր տղաներն ու աղջիկները: Սկսվում է թենիսի ահավոր տեսարանը: Ուրեմն, ոչինչ իրական չէ. ոչ մահը, ոչ սերը, ոչ հանցանքը, ոչ վայելքը: Ամեն ինչ իյուզիա է, մեր զգացմունքների հնարածը: Աշխարհն էլ իրական չէ, իրական աշխարհը մեր զգացմունքների մեջ է, մեր ներսում...):

«Իսկ չե՞ք կարծում, որ այդպես մտածող երիտասարդ մարդիկ, այնպես, խաղի համար, կարող են կործանել երկրագունդը, որը, ըստ նրանց, իրական չէ, չկա, ուրեմն՝ ոչինչ էլ չի կործանվում»:

Օլորիջը լռում է: Համլե՞տ: Դանեմարքայի իշխանը կասկածում էր աշխարհի և մարդկային հարաբերությունների վրա, իսկ ինչպես Ռոլանն էր ասում. «Յուրաքանչյուր 17-18 տարեկանի մեջ կա Համլետի հոգու մի մասնիկը»: Խոսքն այստեղ ազնիվ կասկածանքի, իր շավղից դուրս ընկած ժամանակն ուղղելու հուսահատության մասին է: Համլետը կասկածում էր, բայց գիտեր ինչ է անում: Անում էր հոգեկան լարման, ահավոր էքստազի վիճակում, բայց գիտակցությունը միշտ ներկա էր նրա մատների մեջ, նրա լեզվի ծայրին: Համլետը չէր կրակի աշխարհի վրա, իսկ սրա՞նք...

Արդյոք ո՞ր կտանի մարդկային նորմալ տրամաբանության, բնական զգացումների այս աստիճանական մթազնումը և արդեն այսօր դա վտանգ չէ՞ մեր հոգևած մոլորակի համար: Իմ ականջները հանկարծ լցվում են բիթլերի «Վաղն անհայտ է» երգի ձայներով: Ցավոք սրտի ես չեմ կարող այս տողերին կցել երգի ձայնապնակը: Բայց դա զարհուրելի հուսահատության ճիչ է, որ նարկոմաններն իրենց հիմն են համարում:

Օլորիջ. «Եթե ես հայ լինեի...»

Ես ամեն օր տեսնում էի, որ Օլորիջը աշխատում է նույնիսկ ծովափին, թեպետ նույնիսկ ծովափին՝ նրան անընդհատ պաշարում էին հարցասերները, մեծ մարդկանց ինքնագրերի հավաքածու որսացողները: Բելոռուսիայից մի երիտասարդ բանաստեղծուհի երկու օրով հետաձգեց իր մեկնումը, մինչև որ լուսանկարվեց Օլորիջի հետ, ծովափին, լողազգեստով: Բայց ես տեսնում էի, որ գրողը բոլոր ազատ րոպեներին աշխատում էր և դրա համար չէի կարող չհարցնել.

«Ինչի վրա եք աշխատում»:

«Կահիրեի պատմության», — պատասխանում է: Դա պատմական աշխատությունն է, երևի առաջին մարքսիստական գիրքը Կահիրեի, ուրեմն նաև Եգիպտոսի մասին: Արդեն վերջին լրացումներն են անում: Դժվարին գործ էր, բայց հրապուրիչ, հիմա, երբ մտովին անցել եմ այդ զարմանալի քաղաքի ամբողջ պատմությունը, ինձ թվում է «Հազար ու մի գիշերները» ոչ թե Բաղդադի, այլ Կահիրեի մասին է: Կահիրեի պատմության մեջ շատ հայեր կան...

(Հայե՞ր: Ես, ճիշտն ասած, ուզում էի խուսափել այդ նյութից: Ես միշտ տխրում եմ, վիրավորվում նույնիսկ, երբ նշանավոր օտարերկրացիներին մենք անմիջապես պատին ենք սեղմում. «Ի՞նչ կարծիքի եք Հայաստանի մասին, ձեզ դո՞ւր եկավ մեր, քաղաքը, ջուրը, իսկ Սարյան հավանո՞ւմ եք... »: Երբ հարցը այդպես է դրվում, օտարերկրացին ստիպված է որոնել ջերմ բառեր, երբեմն ուղեղում առաջին իսկ ծագածը, իսկ հետո այդ մտքերը մենք լուրջ-լուրջ տպագրում ենք, մեջբերում, թմբկահարում: Ես չեմ սիրում այդ հարցը, բայց Օլորիջը սկըսեց...):

«...Ուզում եմ հատկապես ասել նրանցից մեկի՝ Բադր Էլ Գամալի մասին (12-րդ դար): Նրան շատ լավ են հիշում Կահիրեի տարեգիրները: Բադր Էլ Գամալը հիմնադիրն է պրեմյեր-մինիստրների դինաստիայի, հայտնի է իբրև մեծ շինարար (մինչև հիմա կանգուն են նրա կառուցած՝ Կահիրեի երեք հիմնական դարպասները):

Այնուհետև Օլդրիջը մանրամասն հետաքրքրվում է 1915 թ. ապրիլյան եղեռնով: Չրույցին ներկա բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը որոշ տեղեկություններ է տալիս:

«Ես եղել եմ Չայաստանում ու միշտ մտածել եմ. ի՞նչ կանեի, եթե ես հայ լինեի, ինչքանով կապրեի իմ ազգի հոգսերը, ինչքանով՝ մարդկության, ի՞նչ կանեի, որ միշտ մնար իմ լեզուն, դավանանքը, ինչպե՞ս կվերաբերվեի աշխարհին, որ անտարբեր եղավ մեր ազգային ողբերգությանը, հազար ու մի այսպիսի հարց, իսկ պատասխան չկա... Դժվար է գտնել: Չամենայն դեպս, եթե ես հայ լինեի, ինձ երջանիկ չէի համարի մինչև այն պահը, քանի դեռ իմ ազգի թափառական քարավանները չեն հավաքվել իրենց պապենական հողի վրա»

(Եվ քանի որ գրույցն այսպես է ավարտվում, ես խնդրում եմ, որ Օլդրիջը մի քանի տող գրի մեր ընթերցողների համար: Անգլիական վիպասանը ջերմ ողջույններ է հաղորդում հայ ժողովրդին, Չայաստանի երիտասարդությանը: Ես շնորհակալություն եմ հայտնում բարեկամական խոսքերի և մեր գրույցի համար: «Չաջորդ անգամ կգրուցենք Երևանում», — ասում է Օլդրիջը: Չուսանք:)

Գաբուն, 1967, թիվ 8-9